

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

»ԼՂՀ 2005 թվականի մարդահամարի արդյունքները (ք. Ստեփանակերտի ցուցանիշները) ժողովածուն ներառում է համապատասխան տեղեկություններ ք. Ստեփանակերտի բնակչության թվաքանակի, ժողովրդագրական բնութագրերի, կրթական մակարդակի, սոցիալ-տնտեսական բնութագրերի, ազգային կազմի, միգրացիայի, տնային տնտեսությունների քանակի ու կազմի, բնակչության բնակության պայմանների վերաբերյալ:

Հրապարակման մեջ զետեղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի առաջին մարդահամարի անցկացման համառոտ պատմությունը:

Հրապարակումը նախատեսված է հանրության լայն շրջանի համար: